

Թեանց մէկ քանին: Այսպէս ընդունելով հանդերձ Եղիսարէթուպոլսոյ թագաւորական ազատ քաղաքի հանգամանքը, իրաւունք չի տար տեղական դատարանին մահուան վճիռ տալ իր սահմաններուն մէջ բռնուած չարագործներուն նկատմամբ: Եւ ուրիշ սեղմումներ ալ՝ որոնք ի դերեւ կը հանեն մէկուկէս դարէ ի վեր թափուած աշխատանքները:

Եղիսարէթուպոլսոյ անկումը 1848-էն կը սկսի, երբ Փրանսական յեղափոխութեան ալիքը բոլոր ճնշուած ժողովուրդները բռնկեցուց եւ ոտքի հանեց նաեւ Մաճառները: Հայերն ալ խլրտումին մէջ մաս ունեցան, Մաճառ ապստամբներու կողքին: Յեղափոխութիւնը զսպուեցաւ, բայց Եղիսարէթուպոլիսը ընկճելէ յետոյ: Հայերը գրեթէ նիւթապէս ալ փճացան, թալանի ենթարկուած ըլլալով իրենց հարըստութիւնը: Իրենց նիւթական կորուստը կէս միլիոն ֆիորինի հասաւ:

Անկէ յետոյ հայերը, քայլ առ քայլ, կորուցնցուցին իրենց դիրքը, արածնութիւնները եւ դիմագիծը:

(Այս մասին աւելի ընդարձակ տեղեկութիւններ գտնել Հ. Գր. Գովրիկեանի «Դրանսիկուսիոյ Հայոց Մետրապոլիսը» եւ եռահատոր «Հայք յեղիսարէթուպոլիս Դրանսիկուսիոյ», եւ Szongott Kristof-ի հինգ հատոր «Monografia» երկերուն մէջ)

ՊՈՒՔՕՎԻՆԱՅԻ ՄԷՁ

Երկու խօսք ալ Պուքովինայի հայոց վաշտած իրաւունքներուն մասին աւստրիական գերիշխանութեան տակ:

1774-ին Պուքովինան անցաւ Աւստրիոյ, ու միասին Սուլթան: Այնպէս որ ամբողջ մէկուկէս դարեր Պուքովինայի հայերը (Սուլթան, Չէրնովից, Կուրահօմօր, Քուլթի եւ Տերէթ) մնացին Աւստրիոյ թեւարկութեան տակ:

Հայերը, որոնք տանջուեք էին Մոլտովայի իշխանութեան մէջ թրքական գերիշխանութեան ժամանակ, յայն չունչ քաշեցին: Սուլթան եկան հաստատուել ուրիշ վայրերէ ալ հայեր: Աւստրիական կառավարութիւնը ինքն իսկ քաջալերեց հայոց ներգաղթը, եւ նոյնիսկ պահ մը ծրագիր մշակեց Սուլթանի մէջ մեծ թիւով հայեր համախմբելու եւ առեւտրական գաղութ մը հաստատելու հոն:

Պուքովինայի առաջին կառավարիչը զօրավար Փօն Սրէյն եւ իր յաջորդը զօրավար Փօն Էնցէնքէրգ մեծ ճիգ թափեցին հայոց թիւը աճեցնելու՝ համոզուած որ անոնց միջոցաւ միայն կարելի պիտի ըլլայ նոյն չրջանի տնտեսական բարգաւաճումը: Աւստրիական կառավարութիւնը, 1779-ին, նոյնիսկ միջնորդութեանը դիմեց Նիքոլա Նիքորովիչ անուն լեհահայու մը, որպէսզի Թուրքիայէն եւ Մոլտովայէն հայեր համախմբէ Պուքովինա: Նիքորովիչ ուսումնասիրեց հարցը, եւ նոյնիսկ ներկայացուց մանրամասն ծրագիր: Իր կարծիքով Սուլթան պիտի ըլլար կեդրոն, վայելելով տեսակ մը տեղական ինքնավարութիւն՝ ինչպէս կը վայելէին Կալիցիոյ հայ գաղութները:

1780 Սպրիյ 4-ին Վիեննայի մէջ դումարուեցաւ Յանձնաժողով մը՝ հայ գաղութի հարցը քննելու: Յանձնաժողովը նոյնիսկ ճշդեց գաղութի հայ անդամներուն տրուելիք արտօնութիւնները, — լուսաւորչական հայերը կաթոլիկ հայերու նման պէտք է վայելեն կրօնական լիակատար ազատութիւն, երբ հայ բնակչութեան թիւը կ'աճի՝ դատաւորները պէտք է ընտրուած ըլլան հայերէն եւ իբրեւ նախադատատեան բոլոր վէճերը լուծեն հայկական օրէնքներով ինչպէս Լէմպէրկի մէջ, պէտք է հայերուն յարմարութիւն տալ կալուածներ գնելու կամ կապալով վերցնելու, վաճառականներու եւ քաղաքացիներու զաւակները պէտք է գերծ ըլլան զինուորական ծառայութեան, եթէ Սուլթանի բնակչութիւնը մեծապէս կ'աճի՝ անկէ մաս մը, հարիւր ընտանիքէն պակաս չըլլալու պայմանով, կրնայ նոր գաղութ մը հիմնել՝ իրաւունք ունենալով եկեղեցի կառուցանելու եւ դատաւոր նշանակելու:

Չիրականացաւ ծրագիրը, բայց այնուամենայնիւ Պուքովինա գաղթեցին շատ մը հայեր ալ: Սուլթանի եւ Պուքովինայի ուրիշ քաղաքներուն մէջ բազմաթիւ հայ կալուածատէրներ կային արդէն, բայց անոնց թիւը աւելի եւս աճեցաւ՝ երբ Մոլտովա, Պուլկարիա եւ այլուր բնակող հայեր, հրապուրուած լուրերէն, սկսան Պուքովինա գալ:

Բայց լախտի հարուած մը եղաւ հայ վաճառականներուն համար 1784 Օգոստ. 27-ին եւ Սեպտ. 16-ին հրատարկուած աւստրիական